ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Երևան «10» մայիսի 2023 թ.

ՀՐԱՄԱՆ № 05-Ա[1]

ԱՐՄԻՆԵ ԱՎԵՏԻՔԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Քաղաքացիական ծառայողի փորձաշրջանի հետ կապված առանձնահատկությունները սահմանելու մասին» N 441-Ն որոշման հավելվածի 2-րդ, 7-րդ, 8-րդ և 14-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական ծրագրերի իրականացմանն աջակցության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-1-27.2-Մ4-1) թափուր պաշտոնը համալրելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունը և Արմինե Գրիգորյանի անձնական դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Արմինե Ավետիքի Գրիգորյանին 2023 թվականի մայիսի 11-ից ինն ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական ծրագրերի իրականացմանն աջակցության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-1-27.2-Մ4-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնում:

2. Արմինե Գրիգորյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի պետ Լուսինե Մարտիրոսյանին:

3. Արմինե Գրիգորյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լ. ՖԱՐՄԱՆՅԱՆ